Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտը պատրաստել է «Իբերա-Կովկասյան լեզվաբանություն» աշխատությունների նոր (3-րդ) հատորը՝ նվիրված Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատությունների լույս ընծայման տարեդարձին։ Ինստիտուտը պատրաստում է լեզուների դասակարգման հարցերին նվիրված ընդարձակ մի մենագրություն։

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտը հատուկ աշխատանք է ծավալել լեզվաբանության ներածության դասագիրքը կազմելու ուղղությամբ։ Պատրաստվում է նաև ընդհանուր լեզվաբանության 1-ին և 2-րդ մասերի նոր վերամշակված հրատարակությունը։

Ղեկավարվելով ընկեր Ի. Վ. Ստալինի ցուցումներով, նաև այն դիտողություններով, որ ընկ. Զարկվիանին արեց Թբիլիսիի քաղաքային 20-րդ պարտիական կոնֆերանսում վրաց գրական լեզվի զարգացման մասին, Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտը ուժեղացրեց իր աշխատանքները ժամանակակից վրաց գրական լեզվի ուսումնասիրման բնագավառում։ Ինստիտուտը խորը ուսումնասիրության է ենթարկում հատկապես Քարթլու և Կախեթի բարբառները, որոնք, ինչպես հայտնի է, հիմք են հանդիսացել ժամանակակից վրաց գրական լեզվի ձևավորմանը։ Սկսված են քարթլու բարբառի բառարան կազմելու աշխատանքները։

Հսկայական աշխատանք է տարվում Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի Լեզվաբանության ինստիտուտում՝ ժամանակակից վրաց գրական լեզվի բացատրական բառարան կազմելու ուղղությամբ։ Բառարանը, որ լույս է տեսնելու 8 հատորով և կազմված է լինելու 125 հազար բառից, հագեցվում է գրական լեզվի նմուշների փաստաթղթերով, որոնք քաղված են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններից, վրաց գրականության կլասիկների և սովետական գրողների ստեղծագործություններից։ Արդեն տպված և վաճառքի են հանված «Վրաց լեզվի բացատրական բառարանի» 1-ին և 2-րդ հատորները։

Ինտենսիվ աշխատանք է տանում Լեզվաբանության ինստիտուտը նաև վրաց գիտական տերմինաբանության համամիացման ուղղությամբ։ Տարվում են պոլիտեխնիկական տերմինաբանական բառարանի կազմման աշխատանքները։ Նախապատրաստական աշխատանք է տարվում գյուղատնտեսության տարբեր բնագավառների տերմինաբանական բառարաններ կազմելու ուղղությամբ և այլն։

Ռուս-վրացերեն և վրաց-ռուսերեն բառարաններ

Վրաց. ՍՍՌ Գիտությունների ակադեմիան ձեռնարկեց ռուս-վրացերեն և վրաց-ռուսերեն բառարանների հրատարակությանը։ Բառարանների ծավալը նախատեսված է 60 հազար բառի սահմաններում, 35 հազար տիրաժով։

Բառարանների պատասխանատու խմբագիր է հաստատված Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ պրոֆ. Դ. Ս. Ախվլեդիանին։

Ռուս-վրացերեն բառարանը լույս է տեսնելու 1952 թ. երրորդ եռամսյակին, իսկ վրաց-ռուսերեն բառարանը՝ 1953 թվի երրորդ եռամսյակին։

Շուտով սկսվելու է բառարանների բամանորդագրությունը։

Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի պրեզիդիումը պլանավորեց նաև «Մեծ ռուս-վրացերեն» և «Մեծ վրաց-ռուսերեն» բառարաններ կազմելու և հրատարակելու աշխատանքները։

«Մեծ ռուս-վրացերեն» բառարանի հրատարակությունը նախատեսված է ավարտել 1954 թվին, իսկ «Մեծ վրաց-ռուսերեն բառարանը»՝ 1956 թվին։

Ա. ՄՅԱՆ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ «ՄԱՐՔՍԻԶՄԸ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության լույս ընծայումից հետո Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայում և գիտական այլ հիմնարկներում դգալի աշխատանք կատարվեց Ն. Յա. Մարի հակագիտական տեսության մերկացման և սովետական լեզվաբանության ու այլ գիտությունների առաջ դրված հիմնական հարցերի քննարկման ուղղությամբ։ Լեզվաբանության, գրականագիտության, փիլիսոփայության,

պատմության այլ հարցերի շուրջը խորհրդակցություններ հրավիրվեցին, որոնք մեծ հետաքրքրություն առաջ բերին դիտական աշխատողների մեջ։ Պատմության, փիլիսոփայության, լեզվաբանության, գրականագիտության և այլ գիտությունների ասպարեզներում աշխատող գիտնականները ձեռնամուխ եղան իրենց աշխատությունների վերանայման, թերությունների վերացման գործին։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտը իր գիտա-հետազոտական աշխատանքների պլանում ավելացրել է «Ադրբեջանական լեզվի կայունության մասին» մի նոր թեմա։ Ադրբեջանական լեզվի պատմությամբ զբաղվողները՝ ղեկավարվելով ընկեր Ստալինի աշխատության դրույթներով, ձեռնամուխ եղան ադրբեջանական լեզվի ծագման հարցի պարզաբանմանը։

Ադրբեջանական լեզվաբանները ձեռնամուխ են եղել նաև Ադրբեջանական լեզվի դիտական բերականության և ադրբեջաներենի բացատրական բառարանի պատրաստման աշխատանքներին։ Հատուկ ուշադրություն է դարձվում ժամանակակից ադրբեջաներենի մշակման ու զարգացման գործին։ Մշակվում են ադրբեջաներենի ուղղագրության կանոնները, նախապատրաստվում է տերմինաբանական բառարանների կազմումը։

Ընկեր Ստալինի՝ լեզվաբանության հարցերի վերաբերյալ աշխատության հիման վրա վերակառուցվեցին Ադրբեջանական ՍՍՌ Ս. Մ. Կիրովի անվան Պետական համալսարանի աշխատանքները, նոր հիմքերի վրա դրվեց լեզվի և գրականության դասավանդումը։

Անցյալ ուսումնական տարվա սկզբում Համալսարանը Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Լուսավորության մինիստրության հետ միասին լայն խորհրդակցություն հրավիրեց, որտեղ քննարկվեցին ռեսպուբլիկայի բարձրագույն և միջնակարգ դպրոցներում լեզվի դասավանդման հարցերը։ Խորհրդակցությունում լսվեցին մի շարք զեկուցումներ լեզվաբանական զանազան հարցերի շուրջը։

Համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը անցյալ ուսումնական տարվա սկզբից սկսել է աշխատել ընկեր Ստալինի լեզվաբանության վերաբերյալ երկերի հիման վրա կազմված նոր ուսումնական ծրագրով։ Ծրագրում մտցված են մի շարք նոր առարկաներ։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության հրատարակման տարեդարձի առթիվ հրավիրվեց Ադրբեջանական ՍՍՌ Գիտութ. ակադեմիայի Պատմության և փիլիսոփայության ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնած նիստ, որտեղ լսվեցին մի շարք զեկուցումներ։ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վ. Սամադովը զեկուցեց «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի զարգացումը Ի. Վ. Ստալինի լեզվաբանական աշխատություններում» թեմայով, ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Մ. Շիրալիևը՝ «Ընկեր Ի. Վ. Ստալինի լեզվաբանական հարցերի վերաբերյալ երկերը նոր գարաշրջան են բաց անում լեզվաբանության մեջ» թեմայով։

Ընկեր Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանձարեղ երկի հրատարակման տարեդարձի առթիվ հուլիսի 5-ին և 6-ին հրավիրվեց Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Ս. Մ. Կիրովի անվան Պետական համալսարանի համատեղ սեսիան։

Սեսիան բաց արեց Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի նախագահ Մ. Ալիևը։

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու Վ. Սամադովը զեկուցեց «Դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի զարգացումը Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության մեջ» թեմայով։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ պրոֆեսոր Մ. Միրալիևը զեկուցեց «Ի. Վ. Ստալինի լեզվաբանության վերաբերյալ երկերը և ադրբեջանական լեզվագիտության հարցերը» նյութի շուրջը։

Պրոֆեսոր Մ. Գուլուզադեն զեկուցեց «Ի. Վ. Ստալինի լեզվաբանության վերաբերյալ երկերը և գրականագիտության հարցերը» թեմայով։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆեսոր Ա. Մակովելսկին զեկուցեց «Լեզվի և մտածողության ուսմունքը Ի. Վ. Ստալինի լեզվաբանության վերաբերյալ երկերում» նյութի շուրջը, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Օրուջովը՝ «Ստալինյան ուսմունքը լեզվի բառարանային ֆոնդի մասին և մեր անելիքները բառարանագիտության ասպարեզում», ֆիլ. գիտությունների թեկնածու Ի. Քյազիմովան՝ «Ազգային լեզուների առաջացման և զարգացման պրոբլեմը Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատության լույսի տակ»։

Սեսիայի աշխատանքներին մասնակցել են Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գիտական աշխատողները, Ս. Մ. Կիրովի անվան Պետական համալսարանի, Վ. Ի. Լենինի անվան Մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորները, դասախոսներն ու ուսանողները, ինչպես նաև Բաքու քաղաքի այլ գիտական հիմնարկների բարձրագույն դպրոցների ներկայացուցիչները։

Սեսիայի կապակցությամբ կազմակերպվել է ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են ընկեր Ստալինի երկերը։

Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը գիտական սեսիաներ է հրավիրել նաև Կիրովաբադ և Ստեփանակերտ քաղաքներում, որտեղ զեկուցումներ են լսվել ընկեր Ստալինի՝ լեզվաբանության հարցերի վերաբերյալ երկերի մասին։ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան և այլ գիտական հիմնարկներ շարունակում են գիտական լարված աշխատանք կատարել Ի. Վ. Ստալինի երկերի բազմակողմանի ուսումնասիրման և ադրբեջանական լեզվի, գրականության, պատմության և մի շարք այլ գիտությունների մեկնաբանման ուղղությամբ։

Հ. ՀԱՍԱՆՈՎ